ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 2»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 2»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Մայրենի 2»: Աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար /Միքայելյան Ա.Վ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ., Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2025. 48 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ.Ա.

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ.Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ.

Հեղինակներ՝
Միքայելյան Արմինե Վ. , մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա Ս.
Օհանյան Հասմիկ Վ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ., Դավթյան Հ. Լ.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի «Մայրենի 2» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ.....11
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....50

ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցն ստեղծված է «Մայրենի 2» գործող դասագրքերին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Երկրորդ դասարանում, սովորողներն առավել աշխատունակ են, ընդարձակվել է նրանց ուշադրության ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, զարգացել են նաև այլ ուսումնական հմտություններ (օրինակ՝ որոշ տվյալներով՝ ԿԱՊԿ ունեցող երեխաներն արդեն կարողանում են 10–15 րոպե ակտիվ լսել ուսուցչի պատմածը), սակայն դեռևս մնում են մի շարք խնդիրներ. արտահայտված արտասանական դժվարություններ, հնչութային ընկալումների անբավարարություն, որոնք արտահայտվում են նաև գրավոր խոսքում՝ տառերի, վանկերի փոխարինումներ, վերջավորությունների բացթողումներ և այլն:

Նշենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների հիմնական ուղղվածությունը ուսուցման գործընթացում դժվարություններ ունեցող երեխաների ոչ միայն ընթերցողական կարողության ձևավորումն է, որը 2–րդ դասարանում արդեն ծրագրային պահանջ է, այլև կարդալու և գրելու նախնական կարողությունների զարգացմանը միտված վարժությունների իրականացումը:

Ուսուցման այս փուլում տեսական տեղեկությունները նվազագույնն են. աշխատանքի հիմնական ուղղությունը գործնական քերականական վարժությունների իրականացումն է, որը պետք է կրի համակարգային բնույթ: Վերջինս պայմաններ է ստեղծում լեզվական տարրական ընդհանրացումները իմաստավորելու և ընկալելու համար:

Անշուշտ, գիրք–տետրում ներկայացված առաջադրանքները միտված են նաև բառապաշարի, կապակցված բանավոր խոսքի, վայելչագրական և ուղղագրական կանոններին համապատասխան գրելու կարողությունների զարգացմանը:

Մեր խորին համոզմամբ՝ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների իրականացման արդյունքում աշակերտները կկարողանան.

- կազմել և ընթերցել տարբեր կառուցվածք ունեցող բառեր՝ վանկային ընթերցանությունից աստիճանաբար անցնելով ամբողջական բառերով ընթերցմանը, պահպանելով կետադրական նշաններին համապատասխան առոգանությունը,
- պատասխանել բնագրի և նկարների վերաբերյալ առաջադրված հարցերին, օրինակ, բնագրում գտնել առաջադրվող հարցի պատասխան–նախադասությունը և կարդալ, տարրական գնահատական տալ կարդացածին և այլն:

Գիրք-տետրում առկա որոշ առաջադրանքներ էլ (21, 24, 28, 36, 37, 51, 54, 112 և այլն) միտված են ընթերցած նյութի իմաստը հասկանալու, մտապահելու, բնագրի բովանդակությանը հարազատ պատմելու կարողության զարգացմանը:

Գիրք-տետրում շատ են նաև ճիշտ գրելու կարողության զարգացմանը միտված առաջադրանքներ (39, 40, 55, 56 և այլն): Առաջադրանքների խոսքային նյութը հիմնականում վերցված է գործող դասագրքերի թեմաներից, որոնք ունեն ճանաչողական, ուսուցանող և զարգացնող բնույթ՝ բառապաշար, խոսքային կառույցներ, բնագրերից հատվածներ, առածներ, ասացվածքներ, դարձվածքներ ու հանելուկներ, ինչպես նաև առարկայական նկարները, թեմատիկ

նկարների և նկար-պատմությունների բովանդակությունը և այլն: Մի կողմից դրանք հետաքրքրություն են առաջացնում դասագրքում առկա նյութերի հանդեպ, մյուս կողմից՝ դրանցով զանազան առաջադրանքների իրականացումը նպաստում է տվյալ տեքստում հանդիպող կարդալու և գրելու դժվարությունները հաղթահարելուն, օրինակ, աշխատանք բաղաձայնների կուտակումով (58, 69, 107, 131 և այլն), ուղղագրական արժեք ներկայացնող (39, 40, 68, 72, 74, 75 և այլն), կազմությամբ բարդ և ածանցավոր բառերի շուրջ (130, 134, 137, 138, 148, 154, 155) և այլն:

Այս գիրք–տետրում ներկայացված վարժությունները ևս առաջարկում ենք կատարել.

- ցուցադրումով (Կատարի՛ր այնպես, ինչպես ես: Համեմատի՛ր՝ ճի՞շտ ես կատարել, և այլն),
- հիշողությամբ, մտային պլանում, իհարկե, նախնական վերլուծական աշխատանքից հետո (Հիշի՛ր: Կրկնի՛ր: Կատարի՛ր: Համեմատի՛ր և այլն),
- նախ՝ խոսքային առաջադրանքներով ու ձևակերպումներով, որից հետո՝ ինքնուրույն:

Ի դեպ, մենք խրախուսում ենք ամբողջական բառերով ընթերցանությունը, սակայն եթե սովորողը կարդալիս դժվարությունների է հանդիպում, առաջարկում ենք վանկային կորերով ընդգծել կարդալու նյութը (բառը, նախադասությունը, տեքստը): Իսկ այն դեպքերում, երբ ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխան բավարար մակարդակով կարդալ գիտի, առաջարկում ենք չբացատրել առաջադրանքի էությունը. երեխան ինքնուրույն կկարդա առաջադրանքը, կփորձի հասկանալ, թե ինչ և ինչպես պիտի անի, որը նույնպես կնպաստի հասկանալով կարդալու կարողության զագացմանը:

«Մայրենի 2» գիրք–տետրում առկա են նաև լեզվական իրողություններ.

1. Հնչյունաբանություն (հնչյուն, տառ) և վանկը՝ որպես բառի մաս: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, դրանց տարբերակումը: Ձայնավոր հնչյունների ուղղագրությունը: Գործնական վարժություններ երկաստիճան և եռաստիճան բաղաձայնների տարբերակման վերաբերյալ: Գործնական ծանոթություն վանկ հասկացողությանը: Վանկը որպես բառի մաս: Միավանկ և բազմավանկ բառեր:

Նշված ուղղություններով շարունակվում են (դեռևս նախորդ շրջափուլերում առկա) վերլուծահամադրական աշխատանքները՝ ձայնավոր, բաղաձայն հնչյունների ճանաչում և տարբերակում, տրված, հաջորդող կամ նախորդող հնչյունի առանձնացումը բառից, հնչյունների հերթականության որոշումը բառում և այլն:

Այս թեմայի վերաբերյալ առաջարկել ենք նմանօրինակ վարժություններ.

– առանձնացնել բառերի նման հատվածները,
– որոշել՝ տվյալ հնչյունը ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն՝ օգտագործելով գույներով ընդգծումներ ու այլ սիմվոլներ,
– իրականացնել վարժություններ, որոնք միտված են մեկ հնչյունով տարբերվող բառերն ընկալելու կարողության զարգացմանը և այլն:

2. Բառ. առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի ուսումնասիրություն, բառատրամաբանական վարժություններ ընդհանրացնող բառերով: Մեծատառը մարդկանց անունների, ազգանունների, կենդանիներին տրվող անունների սկզբում: Տարբեր կառուցվածք ունեցող

բառերի կազմում և ընթերցում, վանկային ընթերցանությունից անցում բառային ընթերցանության:

3. Նախադասություն. նախադասության ճանաչումը և առանձնացումը տեքստում (նախադասությունն սկսել մեծատառով, վերջում դնել վերջակետ), նախադասությունների կազմում հենակետային բառերով, բառակապակցություններով, գծապատկերներով և նկարներով: Բնագրում տրված հարցին պատասխանող նախադասության առանձնացում և ընթերցում:
4. Հասկացողություն բառի իմաստային գործածության մասին. հոմանիշ և հականիշ բառեր:

Գիրք–տետրում ներկայացված առաջադրանքների իրականացումը կօգնի սովորողին գտնելու իր տեղը դասարանում, դառնալու առավել ինքնավստահ: Յուրաքանչյուր սովորող պետք է զգա, որ ինքը դասարանի անդամ է, ուսումնառության ակտիվ կողմ և սուբյեկտ: Ինչպես նախորդ գիրք-տետրերում, այնպես էլ այստեղ առաջադրանքների կատարման ընթացքում հաշվի ենք առել դասարանի բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը, որը ոչ միայն ուսուցման լավագույն միջոցներից է, այլև նպաստում է սովորողների միջև դրական փոխհարաբերությունների ձևավորմանը («երեխան երեխային» սկզբունքով): Զույգով աշխատանքի միջոցով ձևավորվում են նաև ընկերոջից օգնություն ընդունելու, ընկերոջն օգնելու կարողություններ, օրինակ՝ առաջադրանքներ 10, 11, 18, 20, 45 և այլն: Դրանց իրականացման մեթոդիկան ներկայացված է ուղեցույցի համապատասխան առաջադրանքների մեթոդական ցուցումներում:

«Մայրենի 2» գիրք-տետրը սկսվում է այբուբենի կրկնությամբ: Առաջադրանքների կատարման ընթացքում ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ երեխան անվանի նկարում պատկերված

առարկան, իր կատարած գործողությունը զուգակցի խոսքով, պատմի կատարած աշխատանքի մասին և այլն: Առաջադրանքների մեծ մասի համար տրված են կատարման օրինակներ: Այն առաջադրանքներում, որոնցում տրված չէ օրինակը, ենթադրվում է, որ աշակերտը նախորդների տրամաբանությամբ պետք է կատարի այն: Սակայն եթե դժվարանա, առաջարկում ենք ուսուցչին տալ օրինակը:

Գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքները հետաքրքրաշատ են, մատչելի: Դրանց կատարման ընթացքում երեխան նաև գործողություններ է կատարում՝ ինքնուրույն գունավորում, ուրվագծում, տեղադրում է տառը, բառը, արտանկարում, գրելու զանազան վարժություններ է կատարում և այլն: Ընտրված նյութերը ոչ միայն պարզեցված են, այլև առավել գրավիչ, ներկայացված են սիմվոլներով, օրինակ, առարկայական նկարները, բառերի գծապատկերները, վանկային կորերը, գունային ընդգծումները, աղյուսակները և այլն: Ներկայացված առաջադրանքներում հաշվի են առնված նաև միջառարկայական կապերը «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Կերպարվեստ», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների հետ, օրինակ՝ առաջադրանքներ 3, 5, 43 և այլն:

Գիրք-տետրն ունի նաև հավելված: Առաջադրանքների կատարման ընթացքում կարելի է հավելվածի տարբեր բաժիններից ընտրել տառեր, բառաքարտեր, գունավոր վանկեր և տարաբնույթ գործողություններ կատարել դրանցով:

Մեր խորին համոզմամբ՝ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կնպաստեն նաև աշակերտների ինքնուրույնության, ստեղծարարության զարգացմանը որոշ դժվարություններ հաղթահարելու ճանապարհով: Այս շրջանում ևս կարևորում ենք երեխաների խոսքը, վերլուծահամադրական մտածողությունը,

դիտողականությունը, բարձրագույն հոգեկան գործընթացները զարգացնելու հարցը:

Մենք ակնկալում ենք, որ գիրք-տետրը ոչ թե փոխարինի դասագրքերին ու դրանց կից աշխատանքային տետրերին, այլ լրացնի ու օգնի ուսուցչին՝ հաղթահարելու ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնական դժվարությունները մայրենիի դասագործընթացում: Ենթադրում ենք, որ գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքները հաջողությամբ կիրականացնեն այն սովորողները, որոնք արդեն հաղթահարել են նախորդ շրջափուլերի (նախաայբբենական, բուն այբբենական, հետայբբենական) խնդիրները: Ի վերջո, ներկայացված առաջադրանքների նպատակը մայրենի լեզվի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է՝ համապատասխան ուսուցանող և ոգևորող պայմաններ ստեղծելով:

Ընդգծենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների օրինակով մայրենիի յուրաքանչյուր դասի համար կարելի է ստեղծել համանման առաջադրանքներ՝ հաշվի առնելով վերը նշված սկզբունքային մոտեցումները և սովորողների անհատական կարիքները:

Հաջորդիվ ներկայացնում ենք առաջադրանքների իրականացման մեթոդական ցուցումները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

1. Գծիկների վրա տեղադրի՛ր համապատասխան փոքրատառերը (տե՛ս հավելված 1-ը):

Այս առաջադրանքի իրականացման նպատակն է սովորած տառերի կրկնությունը՝ միևնույն ժամանակ մեծատառերի և փոքրատառերի տարբերակումը: Վարժության կատարման ընթացքում երեխան հավելվածում տրված տառերից ընտրում և տեղադրում է համապատասխան գծիկների վրա, որը առաջադրանքի կատարումը դարձնում է ավելի դյուրին: Տառերով որոշակի գործողություններ կատարելու ընթացքում երեխան ուշադրության կենտրոնում է պահում տառապատկերները, ինչը նպաստում է դրանք վերհիշելուն և մտապահելուն: Առաջադրանքում բաց թողնված տառերի ընտրությունը պայմանավորված է դրանց առավել հաճախակի կիրառելիությամբ:

Դժվարանալու դեպքում առաջարկում ենք լրացնել շարքերից միայն մեկի տառերը՝ կա՛մ հորիզոնական, կա՛մ ուղղահայաց:

2. ա) Կարդա՛ այբուբենը և լրացրո՛ւ բաց թողնված տառերը:
բ) Կարմիրով ընդգծի՛ր ձայնավորները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ հայերեն տառերի կրկնությունն է, սակայն այս անգամ՝ ձեռագիր: Այն, ի տարբերություն նախորդի, քիչ ավելի բարդեցված է, քանի որ պարունակում է ինքնուրույնության տարրեր. երեխան ինքնուրույն պետք է գրի բաց թողնված տառը: Առաջադրանքը կատարելուն նպաստելու է նախապես այբուբենը կարդալու գործողությունը: Մյուս կողմից՝ երեխան գրելու է այն տառերը, որոնց հետ նախորդ առաջադրանքում գործողություններ էր կատարել: Վերջինս

նպաստավոր հանգամանք է առաջադրանքը կատարելու համար: Մենք առաջադրանքում ընդգրկել ենք այբուբենի բոլոր տառերը, սակայն ուսուցիչը կարող է դրանք պակասեցնել՝ ընտրելով տառերից մի քանիսը՝ պայմանավորված երեխայի անհատական առանձնահատկություններով:

Առաջադրանքի 2–րդ պահանջով նպատակ ունենք կրկնելու ձայնավոր և բաղաձայն հնչյուն–տառերը, ինչը կարող է մի քիչ բարդ լինել: Դժվարանալու դեպքում կարելի է այն չհանձնարարել:

3. Անվանի՛ր պատկերված առարկաները: Որոշի՛ր հնչյունների քանակը, հավելված 2-ից ընտրի՛ր և քառակուսու մեջ տեղադրի՛ր համապատասխան թիվը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հնչյունային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, ընդ որում պատկերները վերցված են դասագրքի խոսքային նյութից: Առաջադրանքի կատարումը սովորողին կնախապատրաստի դասագրքում առկա բառերը հեշտությամբ ճանաչելու, ինչպես նաև կարդալու: Նման առաջադրանքներ շատ են եղել նախորդ տետրերում, հետևաբար, կարծում ենք՝ այն դժվարություն չի առաջացնի:

4. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Սլաքներով միացրո՛ւ բառերը համապատասխան նկարներին:

բ) Արտագրի՛ր և տառ ունեցող բառերը:

Առաջադրանքի իրականացման նպատակը ***և*** տառն ունեցող բառերի ընթերցանությունը նախապես մշակելն է, քանի որ ընտրված բառերը վերցված են 2–րդ դասարանի մայրենիի դասագրքում առկա ստեղծագործությունից: Առաջարկվող նկարները համապատասխան

բառերին համադրելու գործողությունը կնպաստի բառի պատկերը մտապահելուն և տեքստում դրանք ճիշտ կարդալուն:

Առաջադրանքի 2–րդ մասում երեխան պետք է գրի ***և*** ունեցող բառերը, որի նպատակը մեկ անգամ ևս երեխայի ուշադրությունը այդ բառերի վրա կենտրոնացնելն է: Դժվարանալու դեպքում կարելի է ոչ թե արտագրել, այլ միայն ընդգծել ***և*** տառը տրված բառերում:

5. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր: Յուրաքանչյուր բառի կողքին գրի՛ր տառերի քանակը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը մայրենիի դասագրքում առկա ստեղծագործության բանալի բառերով որոշակի գործողություններ կատարելու միջոցով դրանք տեքստում ճիշտ և սահուն կարդալու կարողության զարգացումն է: Վերջինիս կնպաստի ոչ միայն տրված բառերն արտագրելը, այլև դրանցում տառերի քանակը հաշվելը և գրառել: Եթե երեխան դժվարանա նշված բոլոր հրահանգները կատարել, ապա կարելի է առաջարկել միայն հաշվել տառերի քանակը և ասել թիվը:

6. Կարդա՛ և արտագրի՛ր: Ընդգծի՛ր միայն ձայնավորները:

6–րդ առաջադրանքը նման է նախորդին, նույնիսկ բառերի կրկնություն կա (այլ համադրությամբ), որի նպատակը դարձյալ ճիշտ և սահուն կարդալու կարողության զարգացումն է: Այս դեպքում էլ, ի տարբերություն նախորդի, առաջարկվում է ընդգծել ձայնավորները, ինչը ավելի բարդացնում է առաջադրանքը: Կարելի է առաջարկել նաև ձայնավորները ընդգծել կարմիրով կամ դրանք վերցնել կարմիր շրջանի մեջ: Դժվարանալու դեպքում կարելի է, առանց բառերն արտագրելու, առաջարկել ընդգծել, օրինակ, միայն *ա (ի, ու, օ)* ձայնավորը՝ ցույց տալով օրինակը:

7. Գունավորի՛ր ծիածանը քո նախընտրած գույներով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ դասագրքում առկա նյութի համատեքստում աշխատանքի կազմակերպումն է: Երեխան թեմայի մեջ կմնա՝ նմանօրինակ հետաքրքիր աշխատանք կատարելով: Միևնույն ժամանակ կվերհիշի գույների անվանումները, ինչպես նաև կզարգացնի մանր մկանային շարժումները:

8. Գրի՛ր քո անունը և ազգանունը՝ ինչպես տրված է օրինակում:

9. Գրի՛ր քո ընտանիքի անդամների անունները:

8–րդ և 9–րդ առաջադրանքների իրականացման նպատակը մեծատառի գրությունը հատուկ անուններում ամրապնդելն է, ընդ որում տրված է նաև կատարման օրինակը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք տրված օրինակում ընդգծել առաջին տառերը, որպեսզի առավել ակնառու լինի պահանջը: Առաջադրանքի կատարումը կնպաստի նաև ընտանիքի գաղափարի ամրապնդմանը:

10. Գուշակի՛ր հանելուկը և գրի՛ր պատասխան–բառը, որը սկսվում է ձայնավորով:

Այս առաջադրանքը տրամաբանորեն կապված է նախորդ երկուսի հետ և նպատակ ունի զարգացնել երեխայի մտածողությունը, ինչպես նաև ճշգրտել ձայնավոր հնչյունի մասին պատկերացումները: Դժվարանալու դեպքում առաջադրանքը կարելի է իրականացնել զույգով. դասընկերը կարդում է հանելուկը, իսկ երեխան գուշակում է այն տրված հուշումով:

11. Կարդա՛ բառերը: Դրանք գծերով համապատաս-խանեցրո՛ւ նկարներին:

Այս առաջադրանքի նպատակը դասագրքի տեքստից առանձնացրած բառերի ճիշտ ընթերցումը նախօրոք մշակելն է, դրանց իմաստի ընկալումը, որին կնպաստեն առաջարկվող նկարները: Բառը նկարին համապատասխանեցնելու ընթացքում կարելի է որոշել, թե որքանով է երեխան հասկացել տվյալ բառի նշանակությունը: Դժվարանալու դեպքում առաջադրանքը կարելի է կատարել զույգով. դասընկերը կարդում է բառը, իսկ ուսման դժվարություններ ունեցող երեխան որոշում՝ ո՞ր նկարին կմիացնի գծով:

12. Կարդա՛ բառերը: Արտագրի՛ր *ու* ձայնավոր ունեցող-ները:

Այս առաջադրանքի կատարման նպատակը տեքստից դուրս բերված բառերի շուրջ նախապատրաստական–վերլուծական աշխատանք կատարելու միջոցով կարդալու կարողության զարգացումն է: Իսկ տրված արտագրությունը նպատակ ունի ևս մեկ անգամ երեխայի ուշադրությունը բառի բաղադրիչների վրա կենտրոնացնել՝ *ու* ձայնավորը գտնելու և այդ բառը արտագրելու միջոցով: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել միայն ընդգծել *ու* ձայնավորը և կարդալ այդ բառերը:

13. Կարդա՛, որոշի՛ր յուրաքանչյուր բառի տառերի քանակը: Արտագրի՛ր համապատասխան թվի կողքին:

Առաջադրանքի նպատակը բառը տառային վերլուծության ենթարկելն է, ինչպես նաև կարդալու կարողության զարգացումը: Առաջադրանքում առկա են բառեր, որոնք հնչյունների և տառերի քանակով տարբերվում են: Որպեսզի ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխան տեսողությամբ ընկալի և չշփոթվի, առաջարկել ենք

որոշել միայն տառերի քանակը և արտագրել համապատասխան թվերի կողքին: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել լրացնել մինչև 3–րդ (4–րդ, 5–րդ և այլն) տողը, կամ էլ թիվը գրել համապատասխան բառի կողքին:

14. Արտագրի՛ր բառերը և որոշի՛ր հնչյունների քանակը:

Տե՛ս առաջադրանք 13-ը, սակայն այս դեպքում իրականացվում է բառերի հնչյունային վերլուծություն:

15. Արտագրի՛ր յուրաքանչյուր բառի 3–րդ տառը, ստացի՛ր նոր բառ և կարդա՛:

Այս առաջադրանքի նպատակը տրված բառերը հնչյունային վերլուծության միջոցով առավել լավ պատկերացնելն է (Բառերն ընտրված են դասանյութից) և ճիշտ կարդալը զարգացնելը: Միևնույն ժամանակ առկա է համադրելու գործընթաց, որը առավել հետաքրքիր է դարձնում աշխատանքը՝ նոր բառ ստեղծելու եղանակը: Դժվարանալու դեպքում ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխան կարող է միայն ընդգծել պահանջվող 3–րդ տառերը և անվանել դրանց հնչյունները:

16. Արտագրի՛ր տրված սխեմային համապատասխանող բառերը. դրանցում հնչյունները շատ են տառերից:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառի հնչյունատառային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, ինչպես նաև որոշ բառերում հնչյունների և տառերի անհամապատասխանությանը ծանոթացնելը: Զարգացնում է նաև մտածողությունը և ճիշտ գրելու կարողությունը: Դժվարանալու

դեպքում կարելի է սլաքներով ուղղորդել բառերը դեպի համապատասխան սխեմաներ:

17. Որոշի՛ր՝ ո՞ր հնչյունն է կրկնվում յուրաքանչյուր բառաշարքում: Գրի՛ր այդ հնչյունի տառը:

Առաջադրանքի իրականացման նպատակը տրված բառերը վերլուծության ենթարկելու միջոցով դրանց բաղադրիչները առավել լավ յուրացնելն է, ինչը կնպաստի ճիշտ կարդալու կարողության զարգացմանը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել այդ տառը:

18. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը: Պատասխան–բառը միավանկ է:

Առաջադրանքի իրականացման նպատակը մտածողության, խոսքի զարգացումն է, ինչպես նաև վանկի մասին ունեցած գիտելիքների կրկնությունը: Առաջադրանքը կատարելը դժվարություն չի ներկայացնի, քանի որ տրված է պատասխան–բառ պատկերող նկարը: Այստեղ կարևոր է, որ երեխան հիշի, թե որն է միավանկ բառը: Առաջադրանքը կարելի է կատարել նաև զույգով:

19. Արտագրի՛ր կենդանիների անվանումները: Ընդգծի՛ր միավանկ բառերը:

20. Կարդա՛ հանելուկը: Գրի՛ր պատասխան-բառը և որոշի՛ր վանկերի քանակը:

19–րդ և 20–րդ առաջադրանքների իրականացման նպատակը բառը վանկերի բաժանելու, վանկային վերլուծություն կատարելու կարողությունների զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է

միայն ընդգծել միավանկ բառերը, իսկ 20–րդ առաջադրանքի իրականացմանը կնպաստի թութակի նկարի առկայությունը, որը կհուշի պատասխան բառը: Այստեղ գլխավորը այդ բառի վանկերի քանակը որոշելն է: Առաջադրանքը կարելի է կատարել նաև զույգով:

21. Արտագրի՛ր բառը ճիշտ տեղում:

21–րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է: Արտագրության միջոցով երեխան նախադասություններ է կազմում: Դժվարանալու դեպքում առաջադրանքը կարելի է բանավոր կատարել:

22. ա) Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր միայն թռչունների անվանումները:

բ) Ընդգծի՛ր միջատների անվանումները:

22–րդ առաջադրանքի իրականացման նպատակը նախ՝ կարդացածը հասկանալու, ապա՝ թռչունների ու միջատների անվանումները միմյանցից տարբերակելու կարողության զարգացումն է: Տրված տողերի քանակը ևս հուշում է, թե բառաշարքում քանի թռչունի անվանում կա: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել թռչունների անվանումներն ընդգծել կապույտ մատիտով, իսկ միջատներինը՝ կանաչով:

23. Արտագրի՛ր միայն այն բառերը, որոնց 2–րդ հնչյունը ձայնավոր է:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ, դասագրքում առկա տեքստի բառերը վերլուծության ենթարկելով, ճիշտ կարդալու կարողության զարգացումն է, միևնույն ժամանակ, ձայնավոր հնչյուններն առանձնացնելով, բառի կազմության առավել

լիարժեք պատկերացումը: Դժվարանալու դեպքում կարելի է ընդգծել բառերի 2–րդ տառերը և ասել, թե դրանցից որոնք են ձայնավորները:

24. Ընտրի՛ր համապատասխան բառը և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ընդհանրացում կատարելու կարողության զարգացումն է: Առաջադրանքում տրված են նաև հուշող բառերը. երեխան պետք է դրանցից ընտրի համապատասխան բառը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել անհրաժեշտ բառը:

25. Գուշակի՛ր ամսվա անվանումը և գրի՛ր:

Առաջադրանքի իրականացման նպատակը տարվա ամիսների մասին պատկերացումների ճշգրտումն է, ինչպես նաև կարդալու և գրելու կարողությունների զարգացումը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք լրացնել ոչ թե բոլոր տողերը, այլ դրանցից մի քանիսը կամ գոնե մեկը:

26. Կարդա՛ փոխադրամիջոցների անվանումները: Արտագրի՛ր միայն ձայնավորով սկսվողները:

Այսպիսի առաջադրանք կա նաև մայրենիի դասագրքում, սակայն առանց փոխադրամիջոցների անվանումների: Տվյալ դեպքում մենք առաջարկել ենք այդ բառերը: Որպեսզի ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխան մի քանի անգամ առնչվի այդ անվանումներին, մենք առաջարկել ենք նաև դրանցում առանձնացնել և արտագրել ձայնավորով սկսվողները: Դժվարանալու դեպքում երեխան կարող է ընդգծել ձայնավորով սկսվող փոխադրամիջոցների անվանումները:

27. Կարդա՛ գույների անվանումները: Արտագրի՛ր և ընդգծի՛ր բոլոր ձայնավորները:

Տե՛ս առաջադրանք 26-ը:

28. ա) Արտագրի՛ր շաբաթվա օրերը ճիշտ հերթականությամբ:
բ) Կարմիրով ընդգծի՛ր հանգստյան օրերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու, ինչպես նաև ճիշտ գրելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում երեխան կարող է արտագրել միայն հանգստյան օրերի անվանումները:

29. Կարդա՛ նախադասությունը: Արտագրի՛ր գույների անվանումները:

30. Նշված գույներով գունավորի՛ր պատկերված առարկաները:

Տե՛ս առաջադրանք 28–ը:

31. Արտագրի՛ր բառերը և որոշի՛ր յուրաքանչյուր բառի ձայնավորների քանակը:

Այս առաջադրանքի նպատակը դասագրքում առկա տեքստի բառերը վերլուծության ենթարկելու և դրանք արտագրելու միջոցով կարդալու կարողության զարգացումն է: Ձայնավորները առանձնացնելու միջոցով ևս մեկ անգամ տարբերակում ենք դրանք բաղաձայններից: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել միայն ընդգծել ձայնավորները կարմիր մատիտով:

32. Արտագրի՛ր բառերը և որոշի՛ր հնչյունների քանակը:

33. Արտագրի՛ր գույների անվանումների միայն բաղաձայնները, իսկ ձայնավորների փոխարեն դի՛ր գծիկ:

Տե՛ս առաջադրանք 31–ը:

34. Գծիկների վրա գրի՛ր բաց թողնված ձայնավորները և կարդա՛ ստացված բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ձայնավորների մասին երեխայի պատկերացումները խորացնելն է: Ի տարբերություն նմանօրինակ նախորդ առաջադրանքների, այստեղ երեխայից որոշակի ինքնուրույնություն է պահանջվում, որովհետև ինքը պետք է ընտրի տառը: Սակայն այս դեպքում էլ առաջարկել ենք նկարներ, որոնք կարող են հուշում հանդիսանալ առաջադրանքը կատարելիս: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել գրել միայն այն բառերը, որոնց նկարները երեխան ճանաչում և անվանում է:

35. Կարդա՛ առածները: Ընդգծի՛ր *ա* ձայնավոր ունեցող բառերը:

Այս առաջադրանքի կատարման հիմնական նպատակը առածի ընթերցումն ու դրա ըմբռնումն է: Սակայն *ա* ձայնավորով բառերն ընդգծելու առաջադրանքը կնպաստի ճիշտ կարդալուն և դրանով իսկ՝ նաև կարդացածը հասկանալուն:

36. Կարդա՛ բառակապակցությունը, դիմացը գրի՛ր փակագծում տրված բառերից առավել համապատասխանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ևս կարդացածը հասկանալու և գրելու կարողության զարգացումն է: Լրացնելու համար առաջարկվող բառերը ներկայացրել ենք առաջադրանքի վերջում, որպեսզի երեխան նախ փորձի ինքնուրույն գտնել անհրաժեշտ բառը

և գրել: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել լրացնել մեկ կամ երկու տողը:

37. ա) Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր դրանցում կրկնվող բառը:

բ) Քանի՞ ատամ ունի ոզնին: Գրի՛ր վանդակում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ուշադիր կարդալու կարողության զարգացումն է, քանի որ երեխան պետք է կարողանա գտնել կրկնվող բառը, որը կօգնի նրան պատասխանել առաջադրված հարցին:

38. Կարդա՛, որոշի՛ր հանելուկի պատասխանը և գրի՛ր:

Այս առաջադրանքը նախորդի տրամաբանական շարունակությունն է, որի նպատակը ոզնու մասին պատկերացումների ընդլայնումն է:

39. Կարդա՛: Արտագրի՛ր ո տառով սկսվող բառերը:

40. Կարդա՛: Արտագրի՛ր ե տառով սկսվող բառերը:

41. Կարդա՛ բառազույգերը: Կանաչ գույնով ընդգծի՛ր *ո*, *ե* տառերը.

39–րդ և 40–րդ առաջադրանքների իրականացման նպատակը *ե*–ի և *ո*–ի ուղղագրության ամրապնդումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ոչ թե արտագրել, այլ ընդգծել այդ տառերը:

42. ա) Գրի՛ր պատկերների անվանումները:

բ) Ընդգծի՛ր ո, ե տառերը:

Այս առաջադրանքի նպատակը *ե, ո* տառերի ուղղագրության ամրապնդումն է: Ի տարբերություն նախորդ նմանօրինակ առաջադրանքների, այստեղ երեխան առավել ինքնուրույն է և բառը պետք է գրի առանց տրված օրինակի: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել գրել միայն այն բառերը, որոնք երեխան կկարողանա:

43. Կատարի՛ր թվաբանական գործողությունը: Գրի՛ր պատասխանը տառերով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ գրելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել գրել առաջին 2 գործողությունների պատասխանները:

44. ա) Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր թռչունների անվանումները:

բ) Արտագրի՛ր ձայնավորով սկսվող նախադասությունը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դասագրքում առկա տեքստի առանձին նախադասությունների շուրջ աշխատանքի կազմակերպումն է: Դժվարանալու դեպքում կարելի է ցուցադրել նկարները, որոնք տրված են առաջադրանքին կից:

45. Գուշակի՛ր հանելուկները և գրի՛ր պատասխան–բառերը:

Առաջադրանքի նպատակը թռչունների մասին պատկերացումների ընդլայնումն է, ինչպես նաև խոսքի զարգացումը: Դժվարանալու դեպքում կարելի է աշխատել զույգով:

46. Կարդա՛ կենդանիների անվանումները: Արտագրի՛ր միայն 1 վանկ ունեցողները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակն է կարդալու կարողության զարգացումը և վանկի մասին պատկերացումների ամրապնդումը: Դժվարանալու դեպքում կարելի է ընդգծել միավանկ բառերը:

47. Գծով միացրո՛ւ նախադասությունը համապատասխան նկարին:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

48. Արտագրի՛ր տրված բառերի 3–րդ տառը: Ստացի՛ր նոր բառ և կարդա՛:

Տե՛ս առաջադրանք 15–ը:

49. Կարդա՛ հարցը: Դիմացը գրի՛ր պատասխանը 1 բառով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում երեխան որոշ հարցերի կարող է պատասխանել նկարելով:

50. Արտագրի՛ր տրված բառերը համապատասխան գծապատկերի տակ:

Առաջադրանքի իրականացման նպատակը բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն է, միավանկ և երկվանկ բառերի տարբերակումը, ինչպես նաև ճիշտ գրելու կարողության զարգացումը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք բառերի տակ վանկային կորեր ավելացնել, որը կօգնի երեխային հաշվելու վանկերի քանակը:

51. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր միավանկ բառերը:

բ) Գրի՛ր հարցերի պատասխանները մեկ բառով:

Այս առաջադրանքի իրականացման հիմնական նպատակը ճիշտ և հասկանալով կարդալու կարողության զարգացումն է: Անգամ միավանկ բառերի արտագրության պահանջը միտված է տեքստում առկա բառերը վանկային վերլուծության ենթարկելուն: Առաջադրանքի պահանջներից է նաև տեքստի բովանդակության վերաբերյալ հարցերին պատասխանելը: Սակայն երեխան չի դժվարանա, քանի որ մեկ բառով պետք է գրառի պատասխանը: Ընդ որում, նա կարող է մի քանի անգամ անդրադառնալ տեքստին, որպեսզի պատասխանի հարցերին: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք հարցերին պատասխանել բանավոր, իսկ միավանկ բառերը ոչ թե արտագրել, այլ ընդգծել:

52. Կարդա՛ տրված երկվանկ բառերը: Կորագծերով ընդգծի՛ր վանկերը:

53. Արտագրի՛ր բառերը համապատասխան գծապատկերի տակ:

52–րդ և 53–րդ առաջադրանքների իրականացման նպատակը տրված բառերը ճիշտ կարդալուն նախապատրաստելն է: Առաջադրանքներում տրված բառերը վերցված են դասագրքում զետեղված ստեղծագործությունից: Վանկային և հնչյունային նախնական վերլուծության ենթարկելուց հետո ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխան տեքստում դրանք հանդիպելիս մեծ հավանականությամբ ավելի հեշտ կճանաչի և հետևաբար նաև ճիշտ կկարդա: Դժվարանալու դեպքում կարելի է պարզեցնել առաջադրանքը՝ առաջարկելով լրացնել միայն առաջին գծապատկերի տողերը:

54. ա) Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր կանաչով առանձնացված բառերի բաղաձայնները:

բ) Ի՞նչ անհամապատասխանություն ես նկատում նկարի և քառատողի միջև:

54–րդ առաջադրանքի իրականացման նպատակը տրված քառատողի որոշ բառերի կառուցվածքի վրա երեխայի ուշադրությունը կենտրոնացնելն է: Մենք առաջարկել ենք ընդգծել կանաչով առանձնացված բառերի բաղաձայնները: Այս աշխատանքը նպաստելու է ոչ միայն բաղաձայնների կրկնությանը, այլև բառակազմի ուսումնասիրմանը և առավել լավ ճանաչմանը:

Առաջադրանքի 2–րդ հատվածը վերաբերում է կարդացածը հասկանալուն, որն առաջարկել ենք իրականացնել նկարի հետ համեմատելու միջոցով: Դժվարանալու դեպքում կարելի է հարցերով ուղղորդել երեխային. օրինակ՝ «Քառատողում որտե՞ղ է նկարագրված թռչունի բույնը, իսկ նկարո՞ւմ»:

55. ա) Կարդա՝ լրացնելով բաց թողնված տառերը:

բ) Արտագրի՛ր բառերը՝ ընդգծելով լրացրած տառը:

56. ա) Դիտի՛ր պատկերված առարկաները: Ասա՝ ո՞ր տառն է բաց թողնված բոլոր բառերում:

բ) Արտագրի՛ր բառերը՝ լրացնելով բաց թողնված տառը: Կանաչով ընդգծի՛ր այդ տառը:

55–րդ և 56–րդ առաջադրանքների իրականացման նպատակը ճիշտ գրելու կարողության, ինչպես նաև ուշադրության, դիտողականության զարգացումն է: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք միայն լրացնել բաց թողնված տառը առանց արտագրելու:

57. Կարդա՛ հանելուկը: Դո՛ւրս գրիր գծապատկերին համապատասխանող բառերը:

57–րդ առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է: Որպեսզի երեխան կատարի առաջադրանքի պահանջը, նա պետք է հանելուկի բոլոր բառերը ինչյունային վերլուծության ենթարկի, որը կնպաստի բառի կազմությունն առավել լավ պատկերացնելուն: Միևնույն ժամանակ երեխան գրում է միայն պահանջվող հնչյունների քանակով բառերը, որը նաև ճիշտ գրելու կարողությունն է զարգացնում:

Այս առաջադրանքի նպատակը բոլորովին հանելուկի պատասխանը գուշակելը չէ, սակայն այն ևս կարելի է իրականացնել, որին կօգնի պատասխան–նկարի առկայությունը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք ոչ թե դուրս գրել պահանջվող բառերը, այլ ընդգծել դրանք:

58. Արտագրի՛ր նախադասությունը: Կանաչով ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

59. Կարդա՛ քառատողը: Կանաչով ընդգծի՛ր այն բառերը, որոնք կրկնվել են:

58–րդ և 59–րդ առաջադրանքների իրականացման նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է: Մի դեպքում երեխայի ուշադրությունը 2 բաղաձայն ունեցող բառերի վրա է կենտրոնանում, մյուս դեպքում՝ կրկնվող բառերի: Նշված պահանջները կատարելու ընթացքում երեխան մի քանի անգամ ուսումնասիրում է տեքստի բառերի կազմությունը և ավելի լավ ճանաչում դրանք:

60. Կարդա՛ բառաշարքերը: Կապույտով ընդգծի՛ր փոխված տառը:

61. Որոշի՛ր պատկերված տառը և գրի՛ր գծիկների վրա: Կարդա՛ նախադասությունը:

60–րդ և 61–րդ առաջադրանքների իրականացման նպատակը դիտողունակության, ուշադրության, մտածողության զարգացումն է:

62. Միացրո՛ւ վանկերը և գրի՛ր ստացված բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը վանկերի համադրումով բառեր կազմելու կարողության զարգացումն է: Դարձյալ պետք է նշենք, որ ընտրված բառերը վերցված են գործող դասագրքերում առկա խոսքային նյութից: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք գրել առաջին վանկը, իսկ երեխան կավելացնի հաջորդը: Այստեղ հուշող միջոց է նաև տրված տողերի գունավորումը, որը համապատասխանում է վանկերի գույնին:

63. ա) Կարդա՛ պատմվածքը: Կանաչով ընդգծի՛ր *մրջյուն, փիղ* բառերը:

բ) Տեքստից արտագրի՛ր առնվազն 2 միավանկ բառ:

63–րդ առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ և հասկանալով կարդալու կարողության զարգացումն է: Առաջարկում ենք այս հնարը առավել հաճախ գործածել տեքստը կարդալու ընթացքում: Դժվարանալու դեպքում կարելի է առաջադրանքի 2–րդ պահանջը չկատարել:

64. Լրացրո՛ւ բաց թողնված բառը՝ օգտվելով փակագծում տրված բառերից:

65. Արտագրի՛ր բառերը համապատասխան տողի վրա:

64–րդ և 65–րդ առաջադրանքների իրականացման նպատակը կարդացածը հասկանալու և այն ճիշտ գրառելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է պակասեցնել գրառվող նախադասությունները կամ առաջադրանքը կատարել բանավոր:

66. ա) Կարդա՛ հեքիաթից բերված հատվածը: Գտի՛ր և ընդգծի՛ր *փիղ* բառը:

բ) Որտե՞ղ էր ապրում փղերի ընտանիքը: Գրի՛ր պատասխան–բառը:

Տե՛ս առաջադրանք 63–ը: Սակայն այստեղ ավելանում է կարդացածը հասկանալը ստուգող հարցը:

67. Կարդա՛ բառակապակցությունները: Հավելված 3-ից ընտրի՛ր նկարները և տեղադրի՛ր ճիշտ տեղում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է: Երեխան նաև գործողություններ է կատարում, որն առավել հետաքրքիր է դարձնում առաջադրանքի կատարումը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել կատարել տրվածներից մի քանիսը:

68. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր *և* ունեցող բառերը:

68–րդ առաջադրանքի իրականացման նպատակը ***և***–ի ուղղագրության ուսուցումն է, սակայն միևնույն ժամանակ՝ կարդալու կարողության զարգացումը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել այդ բառերը:

69. Կարդա՛: Արտագրի՛ր բառավերջում 2 բաղաձայն ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 58–ը:

70. ա) Կարդա՛ «Տատիկի ժամացույցը» պատմվածքից մի հատված: Կանաչով ընդգծի՛ր խաղալիք բառը: Հաշվի՛ր ընդգծված բառերը և ասա՛ դրանց թիվը:

բ) Գրի՛ր պատմվածքի հերոսի անունը:

Տե՛ս առաջադրանք 63–ը:

71. Գրի՛ր պատկերված առարկաների անվանումներն ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը առարկա ցույց տվող բառերին տրվող հարցերի մասին պատկերացումների ամրապնդումն է, ինչպես նաև գրելու կարողության զարգացումը:

72. Արտագրի՛ր բառերը համապատասխան սյունակներում:

Տե՛ս առաջադրանք 68–ը:

73. ա) Կարդա՛ տեքստը: Դո՛ւրս գրիր քո թշնամիների անվանումները:

բ) Ասա՛ քո բարեկամների անվանումները: Գրի՛ր դրանցից առնվազն 2–ը:

73–րդ առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է միայն ընդգծել պահանջվող բառերը:

74. Կարդա՛ նախադասությունները: Դո՛ւրս գրիր մարդկանց անունները:

75. Արտագրի՛ր բառերը համապատասխան սյունակներում:

74–րդ և 75–րդ առաջադրանքների իրականացման նպատակը հատուկ անուններում մեծատառի գրության ամրապնդումն է: Դժվարանալու դեպքում կարելի է ընդգծել պահանջվող բառերը:

76. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր առաջին նախադասությունը:

բ) Ո՞ւմ մասին էր պատմությունը: Գրի՛ր նրա անունը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախադասության գաղափարի ամրապնդումն է, դրա ընկալումը և առանձնացումը տեքստից, ինչպես նաև գրելու կարողության զարգացումը: Առաջադրանքի 2–րդ պահանջը միտված է կարդացածը հասկանալը ստուգելուն: Դժվարանալու դեպքում կարելի է բանավոր քննարկել և միայն ընդգծել պատմության հերոսի անունը:

77. Տրված բառերից մեկը մրգի անվանում չէ: Կանաչով ընդգծի՛ր այն:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ընդհանրացնելու և մասնավորեցնելու, ինչպես նաև կարդալու կարողության զարգացումն է:

78. ա) Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր վերջին նախադասությունը:

բ) Գրի՛ր հաղթանակ տարած հերոսի անունը:

Տե՛ս առաջադրանք 76–ը:

79. Շարունակի՛ր ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը գործնական ճանապարհով գոյականի թվի կարգի մասին գաղափարի ընկալումն է: Դժվարանալու դեպքում կարելի է գրառել միայն նկարներով ուղեկցվող բառերը կամ էլ տրված օրինակի վրա ընդգծել հոգնակիակերտ վերջավորությունը:

80. Տրված բառերից ո՞րն է աշխատանքային գործիք: Կապույտով ընդգծի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 77–ը:

81. Փոխի՛ր բառերն ըստ օրինակի:

Տե՛ս առաջադրանք 79–ը, սակայն՝ հակառակ տրամաբանությամբ:

82. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր 2–րդը և որոշի՛ր բառերի քանակը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախադասության մասին պատկերացումների ամրապնդումն է, կարդալու և գրելու կարողության զարգացումը: Դարձյալ նշենք, որ առաջարկվող նախադասությունները վերցված են դասագրքում առկա բնագրից: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք չարտագրել նախադասությունը, այլ միայն հաշվել 2–րդ նախադասության բառերի քանակը:

83. Կարդա՛ նախադասությունը: Կանաչով ընդգծի՛ր *հայերեն* բառը: Ասա՝ քանի՞ բառ ընդգծեցիր:

84. Արտագրի՛ր Երևանի օրհներգը: Ընդգծի՛ր տեղանունները:

Տե՛ս առաջադրանք 59–ը:

85. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր դրանք համապատասխան սյունակներում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը անձ և իր ցույց տվող գոյականների մասին պատկերացումների ամրապնդումն է, ինչպես նաև կարդալու և գրելու կարողության զարգացումը:

86. ա) Կարդա՛ «Կախարդված հանդիսատեսը» պատմվածքից բերված հատվածը: Արտագրի՛ր *հոլ* բառն ունեցող նախադասությունը:

բ) Ո՞ւմ մասին էր պատմությունը: Գրի՛ր նրա անունը:

Տե՛ս առաջադրանք 76–ը:

87. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր դրանք համապատասխան սյունակներում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը անձ և իր ցույց տվող հոգնակի թվով գոյականների մասին պատկերացումների ամրապնդումն է, ինչպես նաև կարդալու և գրելու կարողության զարգացումը:

88. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր այն նախադասությունը, որում կհանդիպես *Լեոնիդ Ենգիբարյան* անվանը:

Տե՛ս առաջադրանք 76–ը:

89. Նշի՛ր մեկ առարկա անվանող բառերը:

Տե՛ս առաջադրանք 79–ը:

90. ա) Կարդա՛ նախադասությունները: Ասա՝ դրանք սկսվում են մեծատառո՞վ, թե՞ փոքրատառով:

բ) Որոշի՛ր՝ քանի՞ բառից է կազմված առաջին նախադասությունը:

Տե՛ս առաջադրանք 82–ը:

91. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր *շախմատ* բառը:

բ) Գրի՛ր պատմության հերոսի անունը:

Տե՛ս առաջադրանք 76–ը:

92. Արտագրի՛ր բառակապակցությունները: Ընդգծի՛ր *ինչե՞ր* հարցին պատասխանող բառերը:

92–րդ առաջադրանքի իրականացման նպատակը հոգնակի թվով գործածված բառերի ճանաչումն ու առանձնացումն է բառակապակցությունից համապատասխան հարցի միջոցով: Այս առաջադրանքի կատարման միջոցով երեխան առնչվում է նաև *բառակապակցություն* հասկացության հետ: Դժվարանալու դեպքում կարելի է միայն ընդգծել պահանջվող բառերը, կամ էլ յուրաքանչյուր տողում նշել հարցը:

93. Գրի՛ր բառազույգն ընդհանրացնող անվանումը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ընդհանրացում կատարելու, ինչպես նաև կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է: Դժվարանալու դեպքում առաջադրանքը կարելի է կատարել նախ՝ բանավոր, ապա՝ գրել:

94. ա) Արտագրի՛ր քառատողը: Ընդգծի՛ր բոլոր տողերում կրկնված բառը:

բ) Գրի՛ր՝ ո՞րն է քո հայրենիքը:

Տե՛ս առաջադրանք 59–ը:

95. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր նրանք, որոնք քեզ են վերաբերում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է, միևնույն ժամանակ երեխան կոնկրետ առաջադրանքով արտագրում է, որն էլ զարգացնում է գրավոր խոսքը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել պահանջվող նախադասությունները:

96. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր ձայնավոր հնչյունով սկսվող նախադասությունը:

բ) Գրի՛ր Թումանյանի անունը: Որոշի՛ր հնչյունների քանակը:

Տե՛ս առաջադրանք 76–ը:

97. Արտագրի՛ր 4 տառ ունեցող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու և դրանք ճիշտ կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել անհրաժեշտ բառերը:

98. Լրացրու՛ բառի պակասող վանկը և ստացի՛ր անուններ:

98–րդ առաջադրանքի նպատակը վանկերը համադրելու և բառեր ստանալու կարողության զարգացումն է: Միևնույն ժամանակ մեծատառի ուղղագրության ամրապնդումն է մարդկանց անունները գրելիս:

99. Կարդա՛ բանաստեղծությունը: Արտագրի՛ր ընդգծված բառերը: Որոշի՛ր դրանցում ձայնավորների և բաղաձայնների քանակը:

99–րդ առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է, ինչպես նաև ձայնավորների ու բաղաձայնների տարբերակման ամրապնդումը: Դժվարանալու դեպքում կարելի է որոշել միայն ձայնավորների կամ միայն բաղաձայնների քանակը՝ առանց ընդգծված բառերն արտագրելու:

100. Կարդա՛ հարցերը: Պատասխանը գրի՛ր մեկ բառով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու, ինչպես նաև հարցերին պատասխանելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է հարցերը կարդալ և պատասխանել բանավոր:

101. Վանկատի՛ր տրված բառերը: Արտագրի՛ր 4 վանկ ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանքներ 19, 51-ը:

102. ա) Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր մեծատառով գրված բառերը:

բ) Հարցի գույնով ընդգծի՛ր պատասխան–նախադասությունը:

102–րդ առաջադրանքի իրականացման նպատակը մեծատառի գրությունը հատուկ անուններում ամրապնդելն է, ինչպես նաև հասկանալով կարդալու կարողության զարգացումը: Այս դեպքում առաջարկել ենք զննական հնար գույների կիրառման միջոցով, որը, մեր կարծիքով, առավել տպավորիչ և հետաքրքիր է դարձնում տվյալ աշխատանքը: Դժվարանալու դեպքում կարելի է սահմանափակվել առաջադրանքի առաջին մասի կատարմամբ:

103. Արտագրի՛ր՝ տրված օրինակով լրացնելով բառազույգերը: Կարդա՛ ստացված բառերը և որոշի՛ր դրանց տարբերությունը:

Այս առաջադրանքի իրականացման հիմնական նպատակը հակառակ իմաստ արտահայտող բառերը իրար կողքի տեսնելն է, ինչպես նաև կարդալու և գրելու կարողության զարգացումը:

104. Կարդա՛ քառատողը: Գտի՛ր և ընդգծի՛ր *հայ* բառը:

104–րդ առաջադրանքի հիմնական նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է, ինչպես նաև բառի արմատի գաղափարին ծանոթացնելը:

105. Կարդա քառատողը: Արտագրի՛ր *և* տառն ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 68-ը:

106. Կարդա՛ հարցերը: Պատասխանները գրի՛ր 1 բառով:

Տե՛ս առաջադրանք 100-ը:

107. Կարդա՛ շուտասելուկը: Դո՛ւրս գրիր իրար կողքի 3 բաղաձայն ունեցող բառը:

Տե՛ս առաջադրանք 69-ը, սակայն այս դեպքում անհրաժեշտ է, որ երեխան ընդգծի 3 բաղաձայն ունեցող բառերը:

108. Կարդա՛ «Անուշ անուններ» բանաստեղծությունը: Որոշի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել *անուշ* բառը և գրի՛ր ստացված թիվը վանդակում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է: Քանի որ *անուշ* բառը մի քանի անգամ է գործածվել, առաջադրանքի միջոցով երեխայի ուշադրությունը

կենտրոնացնում ենք տվյալ բառի վրա, որի ճանաչումն առավել հեշտանում է, արդյունքում՝ բանաստեղծության ընթերցումը ևս:

109. Գրի՛ր համադասարանցիներիդ անունները տրված աղյուսակում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը մարդկանց անունները մեծատառով գրելու կարողության ամրապնդումն է, ինչպես նաև ընդհանրացում կատարելու կարողության զարգացումը՝ աղջիկների և տղաների անունները խմբավորելով: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք տալ մեկական օրինակ:

110. Փակագծում տրված բառերից ընտրի՛ր իմաստով մոտ բառերը և արտագրի՛ր ճիշտ տեղում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը իմաստով մոտ բառերը ճանաչելն է: Հարմարեցման առումով առաջարկել ենք իմաստով մոտ բառերի շարքը, սակայն՝ խառնված հերթականությամբ: Երեխան պետք է պահանջվող տեղում արտագրի անհրաժեշտ բառը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք գծերով միացնել իմաստով մոտ բառերը տրված օրինակով:

111. Գծով միացրո՛ւ կենդանիների ու նրանց ձագերի անվանումները:

Այս առաջադրանքի նպատակը ինչպես հասկանալով կարդալու կարողության զարգացումն է, այնպես էլ կենդանիների ձագերին տրվող անվանումները ճանաչելը: Նմանօրինակ առաջադրանքներ առկա են նաև մայրենիի դասագրքերում, սակայն այստեղ կենդանիների ձագերի անվանումները տրված են, երեխայից

պահանջվում է համապատասխանեցնել: Դժվարանալու դեպքում կարելի է առաջադրանքը մասնակիորեն իրականացնել:

112. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր այն նախադասությունը, որից իմանում ենք, թե ինչ էր արել Լուսիկը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում արտագրելու փոխարեն կարելի է ընդգծել պահանջվող նախադասությունը որևէ գույնով:

113. Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր կրկնված բառերը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

114. Փակագծում տրված բառերը արտագրի՛ր ճիշտ տեղերում:

Տե՛ս առաջադրանք 111-ը, սակայն այստեղ պահանջվում է արտագրել համապատասխան բառը և կարդալ նախադասությունը:

115. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Տե՛ս առաջադրանք 69-ը, սակայն այս դեպքում անհրաժեշտ է, որ երեխան ընդգծի 4 բաղաձայն ունեցող բառերը, որը շատ ավելի բարդ է:

116. Կարդա՛ շարունակությունը և կիմանաս ճնճղուկ մոր պատասխանը:

117. Կարդա՛: Գրի՛ր պատասխան–բառը:

116–րդ և 117–րդ առաջադրանքների իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է, որի համար ստեղծված են որոշակի պայմաններ:

118. Տրված բառերից կազմի՛ր գործողություն ցույց տվող բառեր և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը առարկա և գործողություն ցույց տվող բառերի տարբերակումն է համեմատության միջոցով: Դժվարանալու դեպքում կարելի է սահմանափակել առաջարկվող բառերի գրությունը:

119. ա) Կարդա՛ տեքստը: Գրի՛ր՝ ո՞վ է հայերենի առաջին ուսուցիչը:

բ) Կապույտով ընդգծի՛ր բաղաձայնները:

Տե՛ս առաջադրանք 112-ը:

120. Հայերենի ձայնավորները գրի՛ր կարմիր տնակում, բաղաձայնները՝ կապույտում:

120–րդ առաջադրանքի իրականացման նպատակը մեկ անգամ ևս ձայնավոր և բաղաձայն հնչյուն–տառերի տարբերակումն է, դրանց վերհիշումը: Որպես օգնություն կարելի է առաջարկել ձեռագիր այբուբենը:

121. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր Արթուրի եղբոր խոսքերը:

Տե՛ս առաջադրանք 112-ը:

122. ա) Նշվածներից որո՞նք ես դու կատարում: Գունավորի՛ր կից շրջանակը:

բ) Գրի՛ր՝ էլ ի՞նչ ես անում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է չկատարել առաջադրանքի 2–րդ հատվածը, որն առավել ինքնուրույնություն է պահանջում:

123. Կարդա՛ առածները: Ընդգծի՛ր կրկնված բառը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

124. Տրված բառերն արտագրի՛ր աղյուսակում ըստ օրինակի:

Տե՛ս առաջադրանք 118-ը:

125. Փակագծում տրված բառերից ընտրի՛ր իմաստով հակառակ բառերը և արտագրի՛ր ճիշտ տեղում:

Տե՛ս առաջադրանք 110-ը, սակայն այս դեպքում երեխան պետք է ընտրի իմաստով հակառակ բառերը:

126. Կռահի՛ր թաքնված տառերը և ամբողջացրո՛ւ բառերը: Կարդա՛ դրանք:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը տեսողական ընկալումների զարգացումն է տառապատկերները կռահելու ճանապարհով: Այն նպաստելու է նաև կարդալու, գրելու կարողությունների զարգացմանը:

127. ա) Արտագրի՛ր բանաստեղծության քառատողը: Ընդգծի՛ր կրկնվող բառերը:

բ) Ինչպիսի՞ն էր արևը: Արտագրի՛ր այդ բառը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

128. Արտագրի՛ր բառակապակցությունները: Ընդգծի՛ր *ինչպիսի՞* հարցին պատասխանող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հատկանիշ ցույց տվող բառերի մասին գաղափարի ամրապնդումն է դրանց տրվող հարցի միջոցով: Դժվարանալու դեպքում կարելի է տալ կատարման օրինակը:

129. Տրված Գործողություն ցույց տվող բառերից կազմի՛ր առարկա ցույց տվող բառեր և գրի՛ր:

Տե՛ս առաջադրանք 118-ը:

130. Արտագրի՛ր այն բառերը, որոնցում կրկնվում է *արև* արմատը:

Տե՛ս առաջադրանք 104-ը:

131. ա) Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

բ) Դո՛ւրս գրիր հատկանիշ ցույց տվող բառերը:

Տե՛ս առաջադրանք 69-ը, սակայն այս դեպքում անհրաժեշտ է, որ երեխան ընդգծի 4 բաղաձայն ունեցող բառերը: Առաջադրանքի 2–րդ պահանջը կատարելու համար երեխային առաջարկել ենք համապատասխան ուղղորդող հարցը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք 2–րդ պահանջը չկատարել:

132. ա) Կարդա՛ նախադասությունները: Վանդակում գրի՛ր՝ քանի՞ գույն ունի ծիածանը:

բ) Գունավորի՛ր ծիածանը թվարկված գույներով:

Տե՛ս առաջադրանք 112-ը:

133. Կարդա՛ հանելուկը: Ընդգծի՛ր կրկնվող բառը: Գրի՛ր պատասխանը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

134. Տրված բառերում ընդգծի՛ր *ասպղ* բառը:

Տե՛ս առաջադրանք 104-ը:

135. Կարդա՛ տեքստը: Ընդգծված բառերը կարդա՛ 2 անգամ:

Տե՛ս առաջադրանք 108-ը, սակայն այստեղ առաջարկվում են որոշ բառեր կարդալ 2 անգամ: Ընտրված բառերը կարդալու համար համեմատաբար դժվար են, միևնույն ժամանակ դրանք տեքստի հենակետային բառերն են: Նշված բառերը 2 անգամ ընթերցելու նպատակը ճիշտ և հասկանալով կարդալու կարողության զարգացումն է:

136. Կարդա՛ հանելուկը: Գրի՛ր պատասխան–բառը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

137. Կարդա՛ բառերը: Ընդգծի՛ր *երազ* արմատը:

Տե՛ս առաջադրանք 104-ը:

138. Կարդա՛ պարզ բառերը: Արտագրի՛ր ածանցավորները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառերի տեսակներին ծանոթացումն է աղյուսակի և գունային տարբերակումների միջոցով:

139. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր: Ընդգծի՛ր *ր, ռ* տառերը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

140. Կարդա՛ առարկա ցույց տվող բառերը: Արտագրի՛ր հատկանիշ ցույց տվող բառերը:

Տե՛ս առաջադրանք 138-ը:

141. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծված բառերը կարդա՛ 2 անգամ:

բ) Համամի՞տ ես կապիկի ասածի հետ: Գրի՛ր պատասխանը մեկ բառով:

Տե՛ս առաջադրանք 108-ը, սակայն այս առաջադրանքի 2–րդ պահանջը երեխայի ուշադրությունը հրավիրում է կարդացածը հասկանալու վրա, ինչպես նաև զարգացնում գրավոր խոսքը: Դժվարանալու դեպքում կարելի է հարցին բանավոր պատասխանել:

142. Տրված բառերի կողքին արտագրի՛ր հակառակ իմաստ արտահայտող բառերը:

Տե՛ս առաջադրանք 125-ը:

143. Տրված բառերը արտագրի՛ր համապատասխան սյունակներում:

143–րդ առաջադրանքի իրականացման նպատակը *իկ, ուկ* ածանցների տարբերակումն է տրված օրինակով: Դժվարանալու դեպքում կարելի է ընդգծել նշված ածանցները տարբեր գույներով:

144. ա) Կարդա՛ պատմությունը: Վանկատած բառերը կարդա՛ 2 անգամ:

բ) Ի՞նչ գույնի էին ուլիկի ականջները: Գունավորի՛ր:

145. Կարդա՛ պատմության շարունակությունը: Վանկատած բառերը կարդա՛ 2 անգամ:

Տե՛ս առաջադրանք 141-ը:

146. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր ծ–ով սկսվող բառերը:

բ) Հաշվի՛ր նախադասությունների քանակը և գրի՛ր վանդակում:

Տե՛ս առաջադրանք 108-ը:

147. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր 6 բառից կազմված նախադասությունը:

Տե՛ս առաջադրանք 94-ը:

148. Տրված բառերում ընդգծի՛ր *մայր* արմատը:

Տե՛ս առաջադրանք 104-ը:

149. Կարդա՛ ածանցավոր բառերը: Արտագրի՛ր բարդ բառերը:

150. Կատարի՛ր թվաբանական գործողությունը և կազմի՛ր ածանցավոր բառեր:

Տե՛ս առաջադրանք 138-ը:

151. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր նախադասությունների առաջին բառերը:

բ) Հաշվի՛ր նախադասությունների քանակը և գրի՛ր վանդակում:

Տե՛ս առաջադրանք 108-ը:

152. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր ձայնավորով սկսվողները:

153. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր՝ ընդգծված բառը դարձնելով առաջինը:

Տե՛ս առաջադրանք 108-ը:

154. Կարդա բարդ բառերը: Դրանցում ընդգծի՛ր արմատները և կարդա՛:

Տե՛ս առաջադրանք 104-ը:

155. Ըստ նմուշի առանձնացրո՛ւ արմատն ու ածանցը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը արմատի և ածանցի տարբերակումն է: Առաջադրանքի համար ընտրված բառերը այդ աշխատանքի համար հեշտ ընկալվող են: Դժվարանալու դեպքում կարելի է տարբեր գույներով ընդգծել տրված բառերի արմատներն ու ածանցները, իսկ երեխան կարտագրի դրանք համապատասխան սյունակներում:

156. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր միավանկ բառերը:

157. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր 2 վանկ ունեցող բառերը և դրանք կարդա՛ վանկերով:

Տե՛ս առաջադրանք 19-ը:

158. Նախադասությունները արտագրի՛ր համապատաս-խան նկարների տակ:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը թե՛ հասկանալով կարդալու կարողության զարգացումն է և թե՛ նախադասության մասին պատկերացումների ամրապնդումը: Դժվարանալու դեպքում կարելի է գծերով միացնել նկարը համապատասխան նախադասությանը, հետո արտագրել:

159. Տրված բառերից ընտրի՛ր և գրի՛ր հակառակ իմաստ արտահայտող բառերը:

Տե՛ս առաջադրանք 125-ը:

160. Առարկա և գործողություն ցույց տվող բառերով կազմի՛ր նախադասություններ և գրի՛ր:

Տե՛ս առաջադրանք 158-ը:

161. Փոխարինի՛ր *հող* բառի առաջին տառը *գ, դ, թ, լ, կ, ծ, շ, պ, ց, փ, ք* տառերով և գրի՛ր: Կարդա՛ ստացված բառերը:

162. Փոխարինի՛ր *հող* բառի վերջին տառը *դ, լ, կ, ծ, ն, պ, վ, պ, ր ծ, շ, պ, ր* տառերով և գրի՛ր: Կարդա՛ ստացված բառերը:

161–րդ և 162–րդ առաջադրանքների իրականացման նպատակը ճիշտ կարդալու, ինչպես նաև գրելու կարողությունների զարգացումն է:

163. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր ամպիկների անունները: բ) Արտագրի՛ր ամպիկների երկխոսությունը:

Տե՛ս առաջադրանք 112-ը:

164. Կարդա՛ պատմության շարունակությունը: Ընդգծի՛ր *և* տառն ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 68-ը:

165. Որոշի՛ր և գրի՛ր ընդհանրացնող բառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը մտածողության, ընդհանրացում կատարելու կարողության զարգացումն է:

166. ա) Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր նախադասությունների առաջին բառերը:

բ) Որոշի՛ր նախադասությունների քանակը և գրի՛ր թիվը:

167. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր մինչև *հայրիկ* բառը:

168. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր վերջին նախադասությունը:

166–րդ, 167–րդ և 168–րդ առաջադրանքների իրականացման նպատակն ընթերցվող տեքստի շուրջ տարաբնույթ գործողություններ կատարելու միջոցով այն հասկանալն է. մի դեպքում երեխայի ուշադրությունը նախադասությունների առաջին բառի վրա է, մեկ այլ դեպքում՝ տեքստում առկա նախադասությունների քանակի, 3–րդ դեպքում սովորողը պետք է տեքստում գտնի պահանջվող բառը և արտագրի մինչև այդ բառը, վերջապես՝ պետք է առանձնացնի վերջին նախադասությունը և այլն: Այս ամենը կնպաստի մի քանի անգամ տեքստն ուսումնասիրելու միջոցով այն ավելի լավ կարդալուն և հետևաբար նաև՝ հասկանալուն:

169. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծված բառերը կարդա՛ 2 անգամ:

բ) Արտագրի՛ր Մարիամի խոսքերը:

Տե՛ս առաջադրանք 141-ը:

170. Կետադրական նշանները արտագրի՛ր ճիշտ տեղում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դասագրքի նյութերում կիրառված կետադրական նշանների մասին պատկերացումների խորացումն ու ամրապնդումն է: Առաջադրանքն այնպես է կազմված, որ գույները հուշեն երեխայի յուրաքանչյուր գործողությունը: Արդյունքում ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխան և՛ սովորում է, և՛ մտապահում հայերենի կետադրական նշանները: Կարելի է առաջարկել յուրաքանչյուր նշանից գրել մի քանի անգամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնաուդյան Ա., Մանուկյան Մ., Մայրենի 2, 1–ին, 2–րդ մասեր, Ե., 2023, 79, 98 էջ:
2. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման մեթոդական ձեռնարկ, Մայրենի (1-4-րդ դասարաններ), Աշխ. խումբ՝ Կ. Չիբուխչյան, Լ. Ավագյան, Գ. Մկրտչյան և այլք, Եր., 2009, 63 էջ:
3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Գյուրջինյան Դ., «Մայրենի 3» աշխատանքային տետր, Ե., 2009, 32 էջ:
4. Միքայելյան Ա., Մայրենի լեզվի ուսուցման մի քանի հարցեր ներառական կրթության պայմաններում, «Հատուկ մանկավարժություն և վերականգնողական հոգեբանություն» գիտական հանդես 1(2), Եր., 2011, էջ 36-41:
5. Միքայելյան Ա., Ավագիմյան Ա., Ավագյան Լ., Ենոքյան Տ., «Հետաքրքրաշատ մայրենի», Ե. 2022, 71 էջ:
6. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, 1–ին, 2–րդ մասեր, Ե., 2023, 175 էջ:
7. Аксенова А., Методика обучения русскому языку в коррекционной школе, М., «Владос», 2002, 320 с.
8. Лалаева Р., Логопедическая работа в коррекционных классах, М., «Владос», 2001, 222 с.
9. Лалаянц С., Варданян А., Овсепян А., Обучение русскому языку с легкой степенью умственной отсталости в начальных классах, Е., 2010, 64 с.

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միքայելյան Ա.Վ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 2»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43